հասակում այնքան շատ բաներ գիտէր, այնքան շատ բանէր ուսումնասիրել էր: Իսկ ե՞ս... Ես դեռ ոչինչ չգիտէի...

Ճանապարհը զարմանալի կերպով տրամադրում է մարդուն խօսել, մանաւանդ երկար, ձանձրալի ճանապարհը: Իսկ մեր խօսակցութեան առարկան այնքան առատ էր նիւթերով, որ եթէ տարիներով խոսէինք, դարձեալ չէր սպառոի: Աշխարհի սկզբից մարդիկ խօսում են, վիճում են կրօնի վրայ, եւ պիտի շարունակեն խօսել, մինչեւ աշխարհի վերջը:

Մենք կրկին վերադարձանք դէպի օտարազգի քարոզիչները:

— Նրանք, — նկատեցի ես, — այնպէս չեն, որպէս իրանց հետեւողները, այլ բաւական բարի, քաղաքավարի եւ բարեկիրթ մարդիկ են:

— Այդ այդպէս երեւում է միայն, — պատասխանեց նա ժպտալով, — բայց երբ շատ կը մօտենաք նրանց, կը տեսնէք, թեւ ի՜նչ հրէշներ են: Տեսա՞ք այդ կրօնաւորին, որքա՜ն հեզ էր, որքա՜ն քաղցր էր խօսում, կարծես բերանից մեղր էր հոսում: Բայց միեւնոյն անձը իր հետեւողների սրտում թոյն կը կաթեցնէ, եւ այնքան անզգալի կերպով, որ նա չի զգայ, թէ վարակւում է:

— Այսոամենայնիւ, մեծ զանազանութիւն կայ դրանց եւ բողոքական միսիոնարների մէջ: Այն զանազանութիւնը միայն կայ, որ բողոքական միսիոնարները մեծամիտ են, իրանց միշտ բարձր են պահում ժողովրդի մակերեւոյթից եւ աւետարանի առաքելութեան մէջ անգամ՝ պահպանում են անգլիական կոպիտ հպարտութիւնը: Այդ է պատճառը, որ խիստ նոազ յաջողութիւն են գտնում: Բայց այդպէս չեն եզոիտները. դրանք ամէն ծակ ու ծուկ կը մտնեն, ամէն վիճակի հետ կը յարմարոեն, եւ այդ պատճառով աւելի վտանգաւոր են: Բողոքական միսիոնարը իր գործի մէջ աղայութիւն է սիրում եւ աւելի ուրիշների ձեռքով է գործ կատարում: Բայց եզոիտը ինքը իր գործի ե՛ւ տէրն է, ե՛ւ մշակը:

— Դուք կարծում էք այստեղ կարո՞ղ են նրանք վնասակար լինել:

— Եթէ նրանք կարողանում են վնասակար լինել աւելի քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ, որոնք ճանաչում են նրանց, որոնք գիտեն պաշտպանոել նրանց դէմ, իսկ այստեղ, մի այդպիսի խեղճ, միամիտ, անպաշտպան ժողովրդի մէջ, ինչո՞ւ չեն կարող վնասակար լինել: Բոլոր այն հրոսակները, որ դարերի ընթացքում արշաւանք են գործել Տարօնում, իրանց բարբարոսութեամբ այնքան վնասներ չեն տոել, որքան կարող է տալ այդ հեզ, խոնարհ կրօնաւորը, որ մի հասարակ ձիու վրայ նստած, միայնակ, քրիստոնէական առաքինութեամբ ահա՛ այժմ այցելութեան է գնում այն գիւղը, մի հիւանդի մօտ...